

տակարան մ'է Ղազարայ Է դրուագը, եւ յորում իրենց հարց հետ կը մրցէին նախարարաց փոքր մանուկներն ինքնին (Փրպ. 27): Անոնք այս մասնագիտութեան մէջ դրած էին մեծ արուեստ ու նրբութիւն: Կը բաւէ մտածել անոնց ծառայքն ու երիվարները, աղեղունքն ու սուրերը (նոյն, 26-7), բազէները (նոյն, 27. Խոր. 76), բարակներն (Եղիշ. 175) ու սլառականք (Ազթ. 164. Փաւս. 52). երագագքը (Փրպ. 28. Ազթ. 164) կամ երագագանքն (Եզն. 107) ու գահողը (Փրպ. 26). խուճաւականքն (Ազթ. 164) ու թակարղներ (անդ. Փրպ. 26). որսալից փառական շեմակները (Ազթ. 164), կամ մեծատարած դաշտերն (անդ. Եզն. 107) ու լեռներ (Փրպ. 22. Խոր. 256): Թող արքունական շրջափակ յատուկ որսանոցները (Փաւս. 18, 120. Խոր. 118): Իրենց որսամուտութեան զոհ գնացին՝ Արտաւազդ, ձիարշաւ սուզելով Երասխայ կոհակաց յատակը (Խոր. 138). Մամիկոնեան իշխան մը, տասլալելով սրավազ երիվարէն (Մամ. 12). Գուրգէն անձեւացի, վիճակելով մի եւ նոյն վախճանին¹ (Յհ. կթղ. 223): Բզնունեաց

1. ԺՅ դարուն կային եպիսկոպոսներ ալ, որ կը մըրցէին աշխարհականաց հետ, «սրընթաց ձիովք», եւ «շամբք եւ բազէիւք որսականօք» երէց ու թռչնոց եւ